

ԼԵՋՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԳՐԻ ՈՒ ՄԱՏՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵՅՈՒ

Լ. Գ. ԽԱՉԵՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Լրացավ միջնադարի հայ մատենագրության առավել ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Վարդան Արևելցու մահվան 700-ամյակը։ Նշանավոր պատմիչ, մատենագիր, աստվածաբան լինելով հանգերձ, նա եղել է նաև դպրության տեսաբան և քերական մեկնիչ։

Մեկել է XIII դ. առաջին տասնամյակում։ Ձեռագրական աղբյուրներում հիշատակվում է նաև իբրև Աղվանից Վարդան¹, Վարդան Գանձակեցի, Մեծ Վարդան և Վարդան պատմիչ անուններով։ Պետք է ենթադրել, որ Վարդան Աղվանից և Վարդան Գանձակեցի անվանումները հուշում են նրա ծննդավայրը։ Նա բնիկ Գանձակից կամ, որ և նույնն է առավել լայն տարածքի ընդդրկմամբ՝ Աղվանական աշխարհից պետք է լինի, մանավանդ, որ «Արևելցի» անվանակրումը ևս նույնն է հավաստում։ Հայագիտական գրականության մեջ սկսած Մ. Զամչյանից², հաճախ է շփոթվել Վարդան Արևելցին Վարդան Բարձրբերդցու հետ, որոնք, սակայն, պատմական երկու տարբեր անձնավորություններ են։ Մատենագրությունից հայտնի է, որ Վարդան Բարձրբերդցին հանդես է եկել ավելի ուշ և ապրել է ավելի երկար, քան Վարդան Արևելցին։ Բարձրբերդցին աշակերտել է Կիրիկիայում Հովհաննես Արքանդրոսը, մինչդեռ Վարդան Արևելցին գործել է, հիմնականում, Արևելյան Հայաստանում և իր ուսումնառությունը անց է կացրել «առ տառ» ուսուցչապետ Վանականի³։ Այն ժամանակամիջոցում, երբ Վանականի դպրոցը գերեզմանավորվում է մոնղոլների կողմից, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցու և մյուս ուսումնականների հետ միասին, ճաշակում է ասպատակողների պատճառած անլուր դառնությունները։

Բարձրագույն կրթության աստիճան (ավարդապետական) ստանալուց հետո Վարդան Արևելցին ծավալում է ուսումնագիտական բեղմնավոր գործունեություն և կարճ ժամանակում լայն ճանաչում է գտնում։ 1241 թ. ուխտագնացության է ուղևորվում դեպի Նրուսաղեմ և վերադարձին անցնում է Կիրիկիա, որտեղ շերմ ընդունելություն է գտնում Հեթում Ա թագավորի և կա-

1 Տե՛ս Յ. Տաշեան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 769, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1784, Թ. 206ա, № 2189, Թ. 292բ և այլուր։

2 Տե՛ս Մ. Զամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1781, էջ 237։ «Մեծին Վարդանայ Բարձրբերդցու Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 638 և ուրիշներ։

3 Վարդան Բարձրբերդցին ձեռագրական աղբյուրներում հիշվում է մինչև 1286 թ.՝ ա՛յն դեպքում, երբ 1271 թ. Վարդան Արևելցին արդեն վախճանվել էր։

թողիկոս Կոստանդին Բարձրբերդցու կողմից⁴։ Այստեղ նա մնում է շուրջ հինգ տարի (1242—1246 թթ.) և ծավալում բուռն գործունեություն։ Վարդան Արևելացուն են աշակերտում մինչև անգամ Հեթում Ա թագավորը և նրա կին Զադեյ թագուհին։ Վերջիններիս ուսումնառության համար Արևելցին հանրամատչելի ու պարզունակ լեզվով գրում է «Ժղլանք» ուսումնագիտական ձեռնարկը, որը հասարակագիտական և բնագիտական բազմաթիվ հարցերի մեկնաբանմանը նվիրված «հանրադիտարանային» բնույթի արժեքավոր մի աշխատություն է։

Կիրիկիայում առաջին անգամ գտնված ժամանակամիջոցում, դարձյալ Հեթում Ա թագավորի խնդրանքով, Վարդան Արևելցին գրում է «Մեկնութիւն քերականի»⁵ երկը, որի վերնագրում հիշատակվում է նաև պատվիրատուն՝ «...ի խնդրոյ քազաւորին հայոց Հեթումոյ», որն իրագործում է, ամենայն հավանականությամբ, 1244—1246 թթ.։

Արևելցին Կիրիկիայում է թարգմանում Միխայիլ Ասորու ընդհանուր պատմությունը՝ ասորի Իշդիս ուսումնականի օժանդակությամբ։

Վարդան Արևելցին վճռական մասնակցություն է ունեցել բոլոր այն գործառնություններում, որ Կիրիկիայի կաթողիկոսությունը ունեցել է մի կողմից Հռոմի պապի, մյուս կողմից Արևելյան Հայաստանի թեմերի ու «երկրեւորի» հետ։ Նա մինչև անգամ կաթողիկոսի անվամբ Հռոմի պապին հղված պաշտոնական փաստաթղթերի հարցադրումներն ու ձևակերպումներն է պատրաստել, որոնցում շոշափված են դավանաբանական-քաղաքական կնճռոտ հարցեր։ Վարդան Արևելցին նույնիսկ մոնղոլ տիրակալների հետ վարվող բանակցություններին է մասնակցել և իր հեղինակությամբ նպաստել քաղաքական-տնտեսական որոշ հարցերի կարգավորմանը։

Նրա գրչին է պատկանում «Պատմութիւն տիեզերական» երկը, որը կարեւորագույն սկզբնաղբյուր է մոնղոլների ու նրանց ռազմա-տնտեսական քաղաքականության վերաբերյալ՝ Կովկասն ու Հայաստանը մոնղոլական տիրապետության տակ գտնված ժամանակաշրջանում։

Վարդան Արևելցուն է վերագրվում նաև «Աշխարհացոյցը» իր Ընդարձակ և Համառոտ խմբագրություններով⁶, որոնք տեղագրական շատ արժեքավոր աղբյուր են պատմական Հայաստանի քաղաքների, գյուղերի և մշակութային հոգևոր կենտրոնների վերաբերյալ։

Նա մահանում է 1271 թ. և թաղվում Խորվիրապում։

* * *

Վարդան Արևելցու հայացքները լեզվի ծագման ու զարգացման, դպրության տեսության և մատենագրության սոցիալական դերի ու նշանակության վերաբերյալ՝ իրենց արտացոլումն են գտել մասամբ նրա «Պատմու-

⁴ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 294։

⁵ Իրրև քննական բնագիր, 17 ձեռագրերի համեմատությամբ, առաջին անգամ այն լույս տեսավ մեր աշխատասիրությամբ. տե՛ս Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1972։

⁶ Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի», Փարիզ, 1960։

թիւն տիեզերական» երկում, իսկ համեմատաբար ավելի ընդարձակ արժար-
ծովել են ինչպես «Նուրի» Վարդանայ Վարդապետի ասացեալ բան գովեստի
պատմագրաբար վասն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգման-
չաց»⁷ վերնադիրը կրող ներքողականում, այնպես և «Մեկնութիւն սուրբ գը-
րոց» աշխատութիւնում, որը բանասիրութեան մեջ հայտնի է նաև «Ժողովանք»
կամ «Վարդանագիրք» անուններով: Սույն հոգւածում քննութեան ենթա-
լու երեք հիմնական հարցեր Արևելցու մշակած դրույթներում՝ 1. լեզուների
առաջացման և բնապատմական զարգացման ըմբռնումը, 2. գրի և դպրութեան
առաջացման տեսութիւնը և 3. մատենագրութեան սոցիալական ու մշակու-
թային դերն ու նշանակութիւնը:

Վարդան Արևելցին այլևայլ առիթներով անդրադառնում է աշխարհի
տարբեր լեզուների առաջացման տեսական կարևոր խնդրին: Նա լեզուների
առաջացման հարցը քննելիս ընդհանրապես ելնում է դարաշրջանի տիրող
աշխարհայացքից, միջնադարում ձեռք բերված լեզվաբանական աղբատիկ
տեղեկութիւններից ու պատկերացումներից, որոնք, մեծ մասամբ, հետո են
գիտական ապացուցումներ լինելուց: Արևելցին գտնում է, որ միասնական ընդ-
հանուր լեզվի կորստյանը հաջորդել է անլեզվայնութեան (լեզվի բացակայու-
թեան կամ անխոսութեան՝ «անբանութեան») մի ժամանակաշրջան, որի ընթաց-
քում մարդկային միասնական ցեղը աստիճանաբար սկսում է բաժանվել առան-
ձին հասարակական խմբավորումների՝ «ազգերի»⁸, որոնցից յուրաքանչյուրն
իր համար ստեղծել է սեփական լեզու: Նա իր «Ժողովանք» գիտա-ուսումնական
երկում՝ «Լեզուքն որպէ՛ս բաժանեցան աշտարակաշինութեամբն» իր հարցա-
դրմանը այդպես էլ պատասխանում է. «Յառաջ կորեաւ և ի վայր անկաւ
լեզուն զոր ունէին, և ամէնն որպէս անբան եղեալ առանձնացան իւրեանց ազ-
գան, և ապա սկսան խօսել ամէն ազգ առանձինն»⁹: Ընդամենը՝ կարևոր է դի-
տել, որ յուրաքանչյուր ժողովրդի հատուկ լեզուն Արևելցին բնութագրում է և՛
իր կառուցվածքով, և՛ իրողութիւնների համակարգով ոչ թե որպէս «գիւյ-
վածային» կամ «խառնակ» ու «շփոթ»՝ անկայուն վիճակ, այլ իբրև կանոնա-
վոր և օրինաչափ կայունութեամբ գործող իրողութիւն: Արևելցին հայտնում է
այն միտքը, որ տերիտորիալ սահմաններով միմյանցից պատմականորեն ան-
ջատված ժողովուրդների լեզուների համակարգային հակադրութիւններ լինելը
դնահատվում է որպէս «սքանչելիք». «...Եւ այն են սքանչելիք,—գրում է նա,—
գի ոչ խառնակ և շփոթ ըստ դիպումսոյ խառնէին, այլ իւրեանք շինաւղքն և իւրե-
անց ճորտերն և այն ազգ/ք/ն, որք յաշխարհն իւրեանց էին, ամէնն առանձին
յատուկ առին խառս, և միմեանց չկարէին լսել ազգերն»¹⁰:

Ստեփանոս Սյունեցու ըմբռնմամբ՝ մարդկութեան միասնական ընդհա-
նուր լեզուն «աշտարակաշինութիւնից» հետո ճյուղավորվել է տարբեր լեզու-
ների, որոնք, հակառակ Վարդան Արևելցու պնդման, մայր լեզվի հարաբե-

⁷ Այս երկի հեղինակային պատկանելիութիւնը միայն վերջերս բանասիրական քննութեամբ
ապացուցեց Փ. Անթարյանը՝ Մատենադարանի 8775 գրչագրի միջոցով, որտեղ ամփոփված է
սույն ներքոյ վերը նշված խորագրով, Այստեղ աներկմիտորեն ակնարկվում է նաև հեղինակի
անունը:

⁸ Ի դեպ, Վարդան Արևելցու (ինչպես և ընդհանրապես միջնադարի մեր մատենագիրների)
մոտ «ազգ» բառ-հասկացութիւնը ըմբռնվել է «ժողովուրդ» իմաստով:

⁹ Մատենադարան, ձեռ. № 2544, Թ. 167ա (այս և հետագա ընդգծումները մերն են—Լ. Խ.):

¹⁰ Նույն տեղում, Թ. 167ա:

յությամբ «խաթարված» ու «աղճատված» վիճակ են ներկայացնում՝ առաջացած նոր լեզուների «անհմուտ» կիրառման հետևանքով. «Վասն դի յանհմտութենէ խաւսից թիւրեալ են անուանք և բայք ամենից ազգաց, բաց ի սակաւուց...»¹¹:

Լեզուների առաջացման վարդանյան ըմբռնումը, սակայն, արժեքավոր է մի այլ կողմով ևս. Արևելցին, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Գ. Զահուկյանը¹², իր մի այլ աշխատության մեջ լեզուների առաջացումը աշտարակաշինությունից հետո ընկած ժամանակաշրջանում ոչ թե «աստվածային աղետ» և դժբախտություն է համարում՝ ի տրիտուր մարդկության թույլ տված զանցանքների ու «մեղքերի», այլ՝ իբրև «շատ ինչ բարի», «գեղեցկութիւն» և «գունագեղութիւն»: Հետևաբար՝ Արևելցին, լեզուների բազմազանության իր անվերապահ հիացքով, փաստորեն, բնապատմականության ջատագով հանդիսացող գիտնականի ողջախմբությունն է հավաստում: Նա «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ օ՛ր տանն ներդրված՝ լրուցներից առաջ է բերում հետաքրքրական մի պատում, որն աղերսվում է լեզուների առաջացման խնդրին: Ըստ այդ պատմի, բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ որպես թե մի հրեշտակ ներկայանում է իշխան ներդրվին, որը որսորդության մարդկության համար հարմար է եղել շինարարներին, և աստծու անունից հորդորում նրան, որ մարդիկ հրաժարվեն աշտարակաշինությունից, որովհետև, մեկ է՝ անկարող են աստծուն հասնել այդ միջոցով...: Բայց ներդրվից և շինարարները հավատ չեն ընծայում հրեշտակին: Այդ ժամանակ հրեշտակը իր նմանակիցներին ասում է. «Մեկայք՝ մեք իջցուք և բաժանեցուք զլեզուս նոցա»: Եվ ահա, խառնակության ժամանակ, աշտարակաշինարարները զարհուրած սկսում են փախչել և ապաստան փնտրել: Ի տես դրան՝ աստված աշտարակի հանդիպակաց դրախտի բուրմունքով արբեցնում է մարդկանց, որոնք և մոռանում են իրենց սկզբնական լեզուն. «Եւ այսպես մխիթարեալք զմայլմամբ յանճառելի բուրմանէ հոտոյն՝ մոռացան զառաջին լեզուն»¹³:

Հատկանշական է, որ մարդկության առաջին լեզուն Արևելցին բնութագրում է որպես չհղկված և անզարգացած («խոշոր»), «կոպտածև», որին հաջորդած ժամանակաշրջանում, սակայն, առաջանում են նորաստեղծ ժողովուրդների իմաստության մանրախոհ և գեղեցկության օժտված լեզուները: Իսկ այս նշանակում է, որ նա լեզուների զարգացման և կատարելագործման՝ գեղեցկացման բնապատմական տեսության անվերապահ ջատագով է. «...Եւ շատ ինչ բարի եղև,— գրում է Արևելցին,— մի՛ զի ծանեան մարդիկ զիրեանց տկարութիւն, և դարձեալ՝ զի պատճառք իմաստից և գեղեցկութեան ի խոշոր լեզուէն առաջնոյ և ի կոպտածև՝ փափկազոյն հելլենացուց և սաստ-

¹¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 87.

¹² Ի դեպ, հակադիտական այս տեսակետը իր այլ փոփոխակներով հարատևեց Հայ լեզվաբանական և քերականական երկերում ընդհուպ մինչև XX դ. սկիզբը. «Սոսկեպարյան», «արձաթե դարյան», «երկաթե դարյան», նույնիսկ «ցեխադարյան» հայերենի պարբերաբաժանումը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ստեփանոս Սյունեցու հայացքի առավել ցայտուն արձագանքը:

¹³ Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 250:

¹⁴ «Մեծին Վարդանայ Բարձրբերդդոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին», 1861, էջ 18:

կագոյն հռովմայեցւոց, հոնն՝ սպառնական, ասորին՝ աղաչական, պարսիկն՝ պերճական, և ալանն՝ զեղեցկաձե, գութն՝ ծաղրական, եգիպտացին՝ խարափաձայն, և հնդիկն՝ ճճուող, և հայն՝ ևս ամենազարդ և համեղական»¹⁴։ Կարեոր է դիտել, որ այս տողերում Արեւելցին ոչ միայն լեզուների բնապատմական զարգացման տեսակետն է պաշտպանում, որով մի գլխով բարձր է կանգնում միջնադարի մեր բոլոր քերական մեկնիչներից, այլև միաժամանակ տարբեր ժողովուրդների լեզուներն է բնութագրում զիպով մակդիրներով։

Արեւելցին պնդում է, որ եթե գույների խայտաբղետությունը զեղեցկություն է ծնում, ապա լեզուների բազմազանությունը նույնպես զեղեցկություն է ինքնին. «...և որպէս ազգի ազգի դոյնք զեղեցկութիւն առնեն և զանազանութիւնք հասակաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք»¹⁵։

Վարդան Արեւելցին զանազան առիթներով խոսում է նաև գրի ու դպրության առաջացման պատմության մասին ընդհանրապես, իսկ հայկական գրի ու դպրության վերաբերյալ՝ մասնավորապես։ Բայց մենք այստեղ կսահմանափակվենք գրի ու դպրության առաջացման ընդհանուր հարցադրման քնննությամբ միայն։

Ընդհանրապես գրի ու դպրության ծագումը մեկնաբանելիս Արեւելցին իր ելակետային դրույթներում մնում է, հիմնականում, միջնադարում ընդունված տեսակետների ու պնդումների շրջագծում, որոնք, բնականաբար, բխում են աստվածաշնչային ընդհանուր նախադրյալներից ու ձևակերպումներից։ Բայց այստեղ ևս նա զարգացնում է նոր հայացքներ ու հետեւություններ։

Գրի և դպրության պատմական անհրաժեշտությունը Արեւելցին բացատրում է մարդկային հասարակության առաջընթացի համար նախադրյալ հանդիսացող դարավոր փոքձի արձանագրման հրատապ անհրաժեշտությամբ. «Տնախ... արար գիրս վասն այնր պատճառի,— գրում է նա,— զի մի՛ մոռացին աստուածային շնորհքն և իմաստքն, զոր ետ առաջին մարդոյն, որով կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս և եղ անւանս ամենայն կենդանեաց։ Եւ զի առաջինքն երկաբակեցութեամբ ուսուցանէին զմիմեանս, իսկ կարճակեաց լինելն մարդկան ոչ կարէին վարժել և կրթել, վասն որոյ ճնարեցան գրով թողով յիշատակ անցելոյ իրաց և զուսմունս բանից...»¹⁶։

Արեւելցին, ելնելով աստվածաշնչային ավանդույթից, պնդում է նաև, որ դեռևս «առաջին լեզվի» համար ստեղծվել է գիր, ըստ որում դրա հնդիսակը որպես թե եղել է Ադամի որդի Սեթ նահապետի անդրանիկ զավակը՝ Նոյովը, որի ստեղծած նշանագրերը հետագայում փոխ են առել քաղդեացիները. «Գիր կար քաղդէացի՝ ի նշանագրացն Նոյվայ շինած առաջին լեզուան»¹⁷, գրում է նա։

¹⁴ Նույն տեղում, էջ 18—19։ Ի դեպ, քաղաքակրթ հին աշխարհի լեզուների բնութագրմանը վերաբերող այս հատվածը վերը մեր բերած հարակից հարցադրումներով մասամբ առկա է նաև Արեւելցու հեղինակությամբ մեզ հասած «Հաւաքումն մեկնութեան սրբոց արանց Նզիշէի, Յովհաննու աշխատության մեջ։ Տե՛ս Մատենադարան, ձեռ. 1267, ԹԹ. 47թ—48ա։

¹⁵ «Պատմութիւն տիեզերական», էջ 19։

¹⁶ Նույն տեղում, էջ 395։ Ի դեպ, գրի և դպրության՝ հասարակական անհրաժեշտության արդյունք լինելու առաջավոր դրույթի արծարծումը Արեւելցու կողմից, ինչ խոսք, խիստ արժեքավոր է, քան նույն ներբողում համարյա համանման հարցի շուրջ նրա տված զուտ աստվածաբանական՝ միստիկ բացատրությունը (տե՛ս էջ 395—396)։

¹⁷ Մատենադարան, ձեռ. № 2544, Թ. 167ր։

Օգտվելով մատենագրական այն աղբյուրներից, որոնք վերարտադրում են մեր թվագրության առաջին գարի հրեա նշանավոր պատմիչ Հովսեփոսի աշխատություններում ընդվարի մասին տրված տեղեկությունները, Արևելյին գրի և դպրության առաջացման տեսությունը լրացնում է դրանցով. ըստ այսմ՝ որպես թե ընդվար (որի մասին, ի դեպ, Հովսեփոսը հայտնում է, որ մյուս եղբայրների հետ միասին նա ևս եղել է «նշանավոր աստղաբաշխ»¹⁸), կանխագուշակելով աշխարհի կործանումը տարերային երկակի ուժերի՝ ջրհեղեղի և հրի միջոցով, կանգնեցնում է երկու սյուն՝ մեկը պղնձից, մյուսը կավից, և դրանց վրա փորագրում աշխարհի բոլոր արարածների և երևույթների անունները, որ ... տվել է Ադամը:

Բնականաբար, հարց է ծագում, ինչու՞ ընդվարը ընտրել է հատկապես պղնձն և կավն սյուները: Եվ ահա այս ավանդույթի իմաստը բացահայտվում է նրան տրված պատասխանում, որ վերաբերվում է գրի միջոցով հավերժության ձգտելու մարդու մտահոգությանը. անկախ նրանից, որ աշխարհը կրկործանվի հրի՞, թե՞ ջրի միջոցով՝ գրած ման շնորհիվ անցյալի եղելությունները պետք է լուռ վկաները լինեն մարդկության ապրած նախընթաց դարաշրջանների, որոնք, իրենց հերթին, նրա կենսավարձի ու աշխարհաճանաչության վիթխարի ընդարձակման համար հիմք և նախադրյալ պետք է հանդիսանան: Իր այս հետևությունը նա հիմնավորում է այսպես. աշխարհը հրով կործանվելու դեպքում եթե պղինձը հալվում է, ապա կավը հրակայուն լինելով դիմակայում է, հետևաբար և փրկում է երևույթների անվանակոչումը. իսկ ջրհեղեղով կործանվելու դեպքում եթե կավը քայքայվում է, ապա պղինձը անեղծ է մնում և պահպանում հավերժապես արարածների անվանակոչումը որպես մեծագույն առհավատչյա մարդկային առաջին լեզվի երբեմնի գոյության...: Ահա այս նկատառումներից ելնելով էլ, ասում է Արևելյին, ընդվար կանգնեցնում է պղնձն և կավն երկու սյուներ. «Ասէ, թէ ջրով անցնի (աշխարհս—լ. խ.), մնայ պղինձս. և թէ հրով՝ հալի պղինձս և մնալ/ թրծեալ կաւս...»¹⁹:

Ընդվարյան այս նշանագրերը, սակայն, առեղծվածային են դառնում հետագայում՝ այսպես կոչված «լեզուների խառնակման» հետևանքով, որով մոռացության է դատապարտվում «առաջին լեզուն». միակ բացառությունը կազմել է Սեմի գերդաստանից Եբեր իշխանը, որը պահպանել է «առաջին լեզուն»՝ այն էլ դիպվածի բերումով: Ըստ այսմ՝ բաբելոնյան աշտարակի ինչպես շինության, այնպես և կործանման ժամանակ նա բացակայելիս է եղել: Եվ ահա, երբ «լեզուների խառնակման» պատճառով մարդիկ շին կարողանում կարդալ և հասկանալ «առաջին լեզվով» եղած գրությունները, գիմում ևն Եբերին, որը և հաջողությամբ ընթերցում ու բացատրում է դրանց իմաստը: Հենց այս անձնավորության անվամբ էլ հրեաները եբրայեցիք են կոչվում: Բայց երբ Եբերն էլ վախճանվում է, նրա հետ էլ անհայտության մշտնջող սուզվում է առաջին լեզվի իմացությունը, ուստի և հրեաները այնուհետև պահպանել կարողանում են միայն նշանագրերը իրենց երբեմնի «առաջին»

¹⁸ Տե՛ս 2. Մատթէոս վ. Մաղաք-Քէոփիլեանց, Կենսագրութիւն երեւի տառնց, 4. Բ, Վենետիկ, 1839, էջ 457:

¹⁹ Մատենադարան, ձեռ. № 2544, Թ. 131ա-ր:

լեղվի»²⁰։ Ուշագրավ է, որ մատենագրական այս ամբողջ ավանդույթը վերհանելուց հետո, Արևելքին, նկատի ունենալով պատումի խիստ վաղեմությունն ու վարկածային բնույթը՝ տարակուսանք է հայտնում։ «Թէ իրա՞ն է՝ չգիտեմ...»²¹։ Բայց չհակադրվելով ընդհանուր ճանաչում գտած այս ավանդույթին, նա, այնուամենայնիվ, հակվում է մասամբ ճշմարտանման համարելու այն՝ հենվելով մի սաղմոսատան վկայության վրա։ «Եւ այս որ գրեցաք,—ասում է Արևելքին,— սաղմոսատուն մի կայ վկայ, որ ասէ ընկույց տէր և բաժանեաց զլեզուս նոցա, այսինքն՝ թէ յառաջ ընկույց, որ է կորոյս, խորասոյզ արար զառաջին լեզուն, և ապա տուաւ բաժանաբար»²²։

Հետագայում, սակայն, գրաստեղծման պատմությունը կանգ չի առնում, ասում է Արևելքին։ Մարաստանի աշխարհակալ Արփաքսաթ թագավորը գիր է ստեղծում քաղղեացիների համար՝ հնովսյան գրերի օգնությամբ կամ ներանց նմանակությամբ, իսկ քաղղեացիներից էլ վաղնչական ժամանակների քաղաքակիրթ ժողովուրդները փոխ են առնում իրենց գիրը։ «Եւ յետ ջրհեղեղին Արփաքսաթ անտի գիր արար քաղթէացոցն և անտի այլք...»²³։

Գրի և դպրության տարածման այս տեսության համաձայն, հնագույն քաղաքակիրթ ժողովուրդներից միայն տասնհինգն են, որ ունեցել են գիր և դպրություն։ Ինդսին՝ հատկանշական է և այն, որ այդ ժողովուրդների ծագումն էլ Արևելքին ուղղակի բխեցնում է Նույից և նրա երեք որդիներից՝ իր այս պնդումների համար դարձյալ ելակետ ունենալով Աստվածաշունչը։ «Ո՞ր են ԺԵ (15) ազգքն, որ դպրութիւն գիտեն»,— հարցման ձևով դնելով իր առաջադրանքը, ապա հայտնում է իր կարծիքը։ «Որդիք յԱբեթի որ դպրութիւն գիտեն՝ այս են,—գրում է Արևելքին,—հայք, երեւացիք, լատինացիք, սպանիացիք, յոնք, մարք։ Զ (6) ազգ(ք)։ Որդիք Սեմայ, որ գիտեն դպրութիւն՝ հրեայք, պարսք, քաղթէացիք, հնդիկք, ասորեստանեայք՝ Ե (5) ազգք։ Որդիք Քամայ որ գիտեն դպրութիւն՝ փինիկեցիք, եգիպտացիք, պանփիլացիք, փոլեզացիք, ազգ(ք) Դ (4), ընդամենն՝ ԺԵ (15)»²⁴։ Անշուշտ, նկատում է նա, հետագա ժամանակներում գիր և դպրություն ունեցող ժողովուրդների քանակը անհամեմատ ավելանում է։ «Բայց յետոյ յոլովեաց և այլ ազգս, որպէս Աղւանք և Վիրք Խատա (յ)իք և Բուլվառք և այլք ևս...»²⁵։

Սակայն այս ժողովուրդներից միայն վեցի մասին է Արևելքին իր ներդրումը նշում, որ սեփական և ինքնատիպ գիր են ստեղծել, ըստ որում դրանցից մեկն էլ համարում է մեսրոպյան այբուբենը, իսկ դպրություն ունեցող մյուս ժողովուրդների գրի և մատենագրության մասին նա որոշակի բան չի ասում։ Բայց նրա զարգացրած տեսությունից ինքնըստինքյան հետևում է, որ այդ ժողովուրդների գրերն ու դպրությունները պարզապես փոխառություններ են։

Իբրև հնագույն ինքնատիպ վեց գրատեսակներ Արևելքին համարում է՝ Ննովսի ստեղծածը, բաբելոնյան աշտարակի մոտ գտնված թրծված աղյուսների վրա դրոշմված կավային փորագրությունները, քաղղեացիներինը, հռոմե-

²⁰ Նույն տեղում, Թ. 168ա։

²¹ Նույն տեղում, Թ. 167բ։

²² Նույն տեղում, Թ. 131ա-բ։

²³ Ի դեպ, Արփաքսաթը, ըստ Հերոդոտի վկայության, բազմաթիվ երկրներ է նվաճել, այդ թվում և Պարսկաստանը, ու պատերազմներ մղել Ասորեստանի դեմ։

²⁴ Մատենադարան, ձեռ. № 2544, Թ. 164ա-բ։

²⁵ Նույն տեղում, Թ. 164բ։

ացիներինը, մովսիսականը և, վերջապես, հայկականը. «Գիր ճախագոյն գտեալ յննուքայ, որ եօթնէրորդ էր յԱդամայ, փոխեցեալոյն ի փառս անպատումս Կրեահրաշ փառք,— դրում է Արեւելցին.— երկրորդ՝ գտեալ առ աշտարակին, ի կաւելէն թրծեալ աղիւսի տառատպեալ, երրորդ՝ քաղղեացիք արարին իւրեանց դիրս սովորաբար, չորրորդ՝ լատինացիք զնոյն հոգս յանձին կալեալ արարին իւրեանց դիրս վասն կրթութեան, ճինգերորդ՝ Մովսէսին, որով գրեաց զօրէնս աստուածագիրս և ետ ազգին իւրոյ առ վարժումն, վեցերորդ՝ Հայոց պարգեւալ գիր ի ձեռն սրբոյն Սահակայն, աղօթիւք մեծին Մեսրոբայ...»²⁶,

Բնութագրական է և այն, որ դպրութեան վարդանյալն տեսութեան մեջ կարևոր տեղ ունեն նաև մատենագրութեան սոցիալական ու մշակութային նշանակությունների վերահանումները:

Ի պատիվ Արեւելցու, նշենք, որ նա ըմբռնել է գրի ու մատենագրութեան սոցիալական ու մշակութային նշանակությունները, որոնք իրենց հարցադրումներով ու մեկնարանություններով եզակի են միջնադարի մեր ամբողջ մատենագրութեան մեջ:

Գրի սոցիալական նշանակությունը ընդգծելիս, նա այն ուշագրավ միտքն է հայտնում, որ գիրը հասարակական անփոխարինելի ուժ է և իբրև մտքերի հաղորդման միջոց այն իր էությունը համընդհանուր բնույթ ունի: Այդ պատճառով էլ գիրը, ըստ Արեւելցու, «բրկյուղ» չունի մեծատուններից ու իշխաններից, հակահասարակական պիղծած ու ալլասերված տարրերից, մինչև անգամ՝ «սրբերից»: Ընդամենը՝ նրա վերդասակարգային բնույթը հուշում է Արեւելցու նաև այն պնդումը, որ գիրը «չի զարհուրում» հզորներից, բայց և «չի խղճում» աղքատներին, չի խնայում ո՛չ մերձավոր ծանոթին, ո՛չ էլ հեռավոր թշնամուն. մի խոսքով՝ նա այն ուժն է, որ բացարձակ անաշխույթամբ է իրեն դրսևորում բոլոր երևույթների նկատմամբ առհասարակ. «Եւ արդ, զի՞նչ զքեզ կոչեցից, ո՛վ գիր...: Մեծատանց ակն ոչ առնուս և յիշխանաց ոչ երկնչիս, ի սրբոց ոչ պատկառես և ի պղծոց ոչ խորշիս, ի ծանոթից ոչ ակն ածես և ի մերձակայից ոչ ամաչես, ի հօգոաց ոչ զարհուրիս, և տկարաց ոչ ողորմիս, ի հօգոաց ոչ վեհեբիս և աղքատաց ոչ խղճաս»²⁷:

Ավելին. եթե վարդան Արեւելցին, մի կողմից՝ այն տեսակետին է, որ գիրը, լայն առումով՝ իր սոցիալական կոչումով առհասարակ կրավորական է հասարակական տարրեր խավերի նկատմամբ, ապա իր սոցիալական կոնկրետ դերով ու նպատակադրումով՝ հասարակական ներգործուն ուժ է, որի նշանակությունը դժվար է գերազնահատել: Իրականում՝ գիրը, ըստ նրա, այնպիսի համապարփակ ընդգրկում ունեցող մտքերի հաղորդիչ է, որ մինչև անգամ բանավոր չասվող ու ասել անհնարին թվացող իրականությունները «ի լոյս» է ածում. Արեւելցու ընդհանրացմամբ՝ գիրը որքան թաքուն իրողությունները բացահայտող է, նույնքան և պախարակելի՝ հակահասարակական երևույթները ամենայն անողորքությամբ ձաղկող է, և որ կարևորն է՝ եթե խոսելի արարքները հրապարակային պարսավանքի ենթարկող ու «աշխարհալուր համբավող» է գիրը, բայց և միաժամանակ հասարակական վիրաբույժի հատկությամբ է օժտված, որովհետև դաստիարակում է մարդկանց և ուղ-

²⁶ «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 395:

²⁷ Նույն տեղում, էջ 395:

ղում՝ վերացնում է հասարակական խախտումները հասարակական պախարակման իր գերհզոր ներգործությամբ. «Առ երեսս յանդիմանես և դէմընդդէմ նախատես,— գրում է նա՝ դիմառնաբար խոսքն ուղղելով գրին.— յայտնապէս խայտառակես և ի հրապարակս պարսաւես, ի բազմաց միջի ձաղկոծես և աշխարհալուր համբաւես, զծածուկսն յայտնես և զխորհուրդս սրտից յայտնապէս ասես, զթափունսն պատմես և զանճաւելիսն ի լոյս ածես, հրապարակագոյժ գասելիսն առնես և առաջի բազմաց խմաշեցուցանես, երկեցուցանես, զաւրճուրեցուցանես, ի զղջումն ածես, յաղղութիւն կոչես, յուսադրես. նորոգես, հաստատես, փրկես, կանգնես, փարատես...»²⁸։ Միջնադարի մեր մատենագրության մեջ գրի սոցիալական բովանդակության բացահայտման առավել խորաքնին ըմբռնում անհնար է մատնանշել։

Բացի այս հարցադրումից, Արեւելից գրի՝ հայ իրականության նկատմամբ ունեցած կոնկրետ նշանակությամբ բացահայտում է նրա մի շատ կարևոր առանձնահատկությունը ևս. գիրը նպաստել է հայ ժողովրդի՝ իբրև հասարակական ընդհանրություն՝ շաղխմանը (կոնսոլիդացմանը), նրա սոցիալական տարբեր շերտերի հսկայական հոգեկան կերտվածքի առավել ընդհանուր աղերսակցությունն ստեղծելու իր կատարած պատմական դերով։

Որքան էլ անհավատալի թվա տվյալ ժամանակաշրջանի համար, բայց փաստ է, որ Վարդան Արեւելից հիանալի է ըմբռնել գրերի գյուտի միջոցով առաջացած մատենագրության ու դպրության հասարակական կարևոր գործոն լինելը հայ հասարակության անդամների միջև հոգեկան կապերի ներամրապնդման խնդրում. տեսաբանի խորաթափանցությամբ նա այն ճիշտ միտքն է հայտնում, որ գիրն ու մատենագրությունը ստեղծում են հոգեկան ներքին կերտվածքի ընդհանրությունն տվյալ լեզվով խոսող մարդկային հասարակության անդամների միջև և արտացոլում միաժամանակ այդ ընդհանրությունը։ Խորաքնին՝ փիտարկումից բխած այս ընդհանրացումը, անշուշտ, վկայությունն է հեղինակի անտարակուսելի լայնախոհության, որը բարձրացնում է նրան իր ժամանակակիցներից մի ամբողջ գլխով։ Բացահայտելով գրերի գյուտի ունեցած անդրադարձ նշանակությունը, նա գրում է. «Այժմ ոչ կարօտասցի որ թարգմանութեան և ոչ ընթասցի որ առ ոք թե՛ ծանո՛ ինձ զայս, այլ՝ միատեալ միաբանութեամբ վերինք և ներինք, ներսինք և արտաքինք, վեճք և ռամիկք, հեռաբնակք և մերձակայք. մեծամեծք և փոքունք ամենեքեան ծանիցեն զճմարտութիւն և իմասցին զարդարութիւն, յաւժարեսցին ի լատիւն և զործեսցեն զբարութիւն...»²⁹։ Հնդգծված տողերից հետևում է և այն, որ հայ ժողովրդի առանձին հատվածները ինչպիսի՜ պայմաններում և ինչպիսի՜ հեռավորություններում էլ գտնվելիս լինեն անագորույն ճակատագրի բերումով՝ նրանց իրար միացնողն ու հոգեպես զօղողը եղել է և մնում է հայեցի դպրությունն ու մատենագրությունը։ Վարդան Արեւելցու այս մեծ ընդհանրացումը միջնադարի հայ հասարակական մտքի գնահատման առումով՝ նույնպես անգերազանց է մեր մատենագրության մեջ։

Գրի մշակութային դերի մասին խոսելիս Վարդան Արեւելից կանգ է առնում հիմնականում երեք հարցի վրա. ա) գիրը իբրև լեզվի զարգացման միջոց

²⁸ Նույն տեղում, էջ 395։

²⁹ Նույն տեղում, էջ 380։

կամ խթան. բ) գիրը իրրև ժողովրդի հոգևոր գանձերի բացահայտման միջոց ու դրանց հուսալի պահպան. գ) գրի միջոցով ստեղծված հայ մատենագրության գիտական-մշակութային նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության համար:

Վարդան Արևելցին իրավացիորեն նշում է, որ մաշտոցյան գրերի գյուտով երբ ստեղծվում են դպրություն և մատենագրություն, հայոց լեզուն աննախադեպ զարգացում է ապրում: Եթե մինչ այդ հայոց լեզուն դալկանում և հեղձվում էր «թանձրակզու» («խաղտախուղտ») ասորական և «ծուռումուռ սեթևեթություն» («ծեքածուռ ծեթևեթին») արտաբերվող հունական մատենագրությունների տիրապետության պատճառով, ասում է նա, ապա այժմ արդեն ձեռքազատվում է այդ կապանքներից. տեղի է ունենում «հրաշքանման» մի երևույթ՝ «կաղացող» հայոց լեզուն միանգամից «սլանում» է՝ գեղեցկանալով ու առնականանալով, և որ կարևորն է՝ սկսում է ճախրել գիտության բարձունքներում. «Արդ երազեսցէ կաղութիւն լեզվս մերոյ, որ ոչ կարէր զխաղտախուղտ ասորուցն բարբառել կամ զյունարէն ծեքածուռն ծեթևեթին,— գրում է նա:— Այժմ պարզեսցին լեզուք ծանրախօսք, և զօրացի տկարութիւն գիտութեան մերոյ...»³⁰: Փարատվում է հայ ժողովրդի համար տգիտության թանձրամած խավարը և բացվում գիտության արևածագը՝ տրամագծական այնպիսի բևեռամբ, ինչպիսի բևեռամբ իրար են հակադրվում Արևելքը ու Արևմուտքը. «...գի որչափ հեռի են Արևելք յԱրևմտից, այնչափ հեռի արար ի մէջ տէր զխաւար տգիտութեան մերոյ»³¹: Ի դեպ, Վարդան Արևելցին նորաստեղծ գրի նշանակությունը հայոց լեզվի զարգացման համար տեսնում է նրանում, որ այն, իբրև հզոր միջոց, բարձրացնում է հայոց լեզուն գիտության ու մատենագրության լեզվի մակարդակին: Նա միանգամայն ճիշտ է նկատել, որ խոսակցական լեզվի զարգացումը, իր հերթին, պայմանավորված է մատենագրական լեզու դառնալու հանգամանքով: Հենց դա էլ նկատի ունենալով Արևելցին ծանրախոս հանդիսավորությամբ հայտարարում է. «Լուծաւ կայս բերանոյ, փարատեցաւ նսեմութիւն խաւարի, տարածեցաւ լոյսն, ծաւալեցաւ ճառագայթն»³²: Մատենագրության ստեղծման նման գնահատումներով ընդգծվում է, անշուշտ, գրի ունեցած մշակութային հեղափոխիչ նշանակությունը, որ այնպես խորապես ըմբռնել է Արևելցին:

Արդարացիորեն գնահատելով, որ գիրը ժողովրդի հոգևոր գանձերի բացահայտման միջոց է և դրանց հուսալի պահպանը, Արևելցին այն բնութագրում է որպես հայ ժողովրդի «սխրալի սանդուխք ելից»՝ ո՛չ միայն ազգովին «փրկվելու» իմաստով, այլև մանավանդ քաղաքակրթական իր մակարդակը բարձրացնելու առումով: Նշենք, որ այս առթիվ նա ընդգծում է նաև գրի վիթխարի դերը մարդու ճանաչողական պրոցեսում. «Ո՛վ գերապանծ գիր ղարմանալի, ո՛վ հիահրաշ տիպ գերազարդեալ, ո՛վ սխրալի սանդուխտ մեր ելից.— բացականչում է նա,— անծանօթ՝ և ծանուցեալ, հեռաւոր՝ և մօտակաց, անբարբառ՝ և նարտասան...»³³:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, էջ 380:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, էջ 394:

Բայց Արևելցին բացահայտում է գրի այլ առանձնահատկությունները ևս. գիրը նվազաստեղծ («երգարան») եթերայնությամբ օժտված լինելով հանդերձ՝ միաժամանակ ծանրախոս («յամբախոս») է, ասում է նա, անթե թուղունի նման սրընթաց լրատու լինելով հանդերձ՝ միաժամանակ նաև հետագա դարերի համար «անշարժ կայան» է տարեգրության. «Ո՛վ գերապանծ գիր պարմանալի... երգարան և յամբախոս, սուրհանդակ և տեղապահ, անթե թուղուն և անշարժ կայան...»³⁴, Ավելին. բավարար չհամարելով այս դիպուկ բընութագրումները Արևելցին դիպուկ ձևակերպումներով տալիս է նաև գրի էությունը բացահայտող սպառիչ նշանակությունները. ըստ նրա՝ գիրը թանձրացականորեն մնայուն լինելով հանդերձ՝ հավերժորեն գնալուն է, թուղ լինելով հանդերձ՝ միաժամանակ մնալուն է. գիրը և՛ տեղում է մնում, և՛ եթերանում է, և՛ թանձրացական է, և՛ անէական՝ իմաստային հաղորդիչ լինելու իր բացառիկ հանգամանքով. «...Ո՛վ գերապանծ գիր... կայի՛մ բնթացեալ և թշնամբ մնացեալ, երգընթաց ու յամբաշարժ, ի տեղի և անտեղի, ի մարմին և յանմարմին»³⁵:

Արևելցին նկատում է նաև, որ գրով պարփակված մտածողությունը իր տարողությամբ անսահման է և օվկիանոսային անհոնություն ունի, այդ պատճառով էլ ուսումնականները որքան էլ փութեղանդությամբ տարվում են ընթերցումներով, դարձյալ զգում են, որ սպառել այն չեն կարող:

Վարդան Արևելցին, իբրև եզրափակիչ հարցադրում, դեռ այն ժամանակ ըմբռնում և գնահատում է գրի միջոցով ստեղծված հայեցի մատենագրության գիտական-մշակութային նշանակությունը համաշխարհային փառափառության համար: Նա ըստ արժանվույն է գնահատում հայ դպրության ու մատենագրության առաջին երախտավորներ՝ Եղիշիկին, Մովսես Խորենացուն, Մամբրե Վերծանողին, Հովսեփ Դարանաղացուն, Դավիթ Անհաղթին, Եղիշեին և մյուսներին: Սրանք, Արևելցու խոր համոզմամբ, մտքի և հոգու տիտաններ են եղել, որոնց հուզել են ժամանակի գիտական բոլոր հետաքրքրությունները. «Հարցասէրք և քննափափագք լինէին ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստ ունելով զանձինս ի յերկս օգտակարս և ի գործս շահաւէտս»³⁶, — եզրակացնում է նա: Ըստ որում՝ հանուն դպրության ստեղծման նրանք զոհաբերություններով ու տառապանքներով լի հեռավոր ճանապարհորդություններ են կատարել. դեպի ժամանակի քաղաքակիրթ աշխարհի փառաբանված մայրաքաղաքները: «Ընդ ծովու կուէին, ընդ ալիսն մարտընչէին, հողմոց ընդդիմանալին, նեղութեանց համբերէին, օտարութեան տանէին, նախատանաց ժուժկալէին, միայն ուսման ուշ ունէին և արդիւնաւոր շահից»³⁷:

Վարդան Արևելցին բարձր գնահատելով հայ մատենագրության ու դրա դպրության հիմնադիրների մտավոր ու հոգեկան բարեմասնությունները, միաժամանակ բացահայտում է այդ մատենագրության ստեղծման նրանց հոյակապ ծրագիրը. մտքի այս հսկաները, ասում է նա, որոնք օժտված էին անսպառ եռանդով ու անխոնջ նվիրումով, ծրագրային վիթխարի աշխատանք

³⁴ Նույն տեղում, էջ 394:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, էջ 382:

³⁷ Նույն տեղում, էջ 382—383:

էին տանում մայրենի դպրության ստեղծման համար. նրանցից ոմանք մատենագրական երկերի ընտրություններ էին զբաղված, մյուսները՝ դրանց թարգմանումով ու արտագրումով. ընդամին՝ ո՛չ ամեն ինչ անխտիր՝ պատահած երկի վրա ձեռք գնելով, այլ միայն «շահաւէտ ծաղիկներն» (իմա՝ երկերն) էին մեր դպրության համար նախատեսում՝ «Ժիր» ու «գործունյա», բայց «իմաստուն մեղվի» նման, իսկ իրենց տեսակետով «խոտան» գիտվածները՝ բաց թողնում. «Ոմանք և ի գծագրութիւնս տառից շահաւորեալ և ոմանք ի նիւթոցն պատրաստութիւն, բայց յիմաստութիւն ամենքեան դեգերէին, հաւաքելով ինքեանս ղհոյս իմաստիցն իբր զիմաստուն մեղու ժիր և գործունեայ՝ զանօտագոյն և զշահաւէտ ծաղիկս հաւաքէին և զխոտանսն ի բաց ընկնեուին»³⁸:

Կարևոր է նշել նաև, որ Արևելքին գիտականորեն արժեքավորում է հայ մատենագրության հիմնադիրների գրական ժառանգության ամբողջ վաստակը, Մատենագրական երկերի ընտրությունը, միանգամայն ճիշտ պատկերացմամբ, նա կատարում էր իմաստասիրության երկու գլխավոր բաղկացուցիչ մասերը հանդիսացող «տեսական» և «գործնական» գիտությունների դասակարգման համաձայն: Ընդամին՝ «տեսական» գիտություններ ասելով հասկացվում էին գիտության այն ճյուղերը, որոնք ներկայացնում են մասթեմատիկայի («ուսումնականն»), բնագիտության («բնաբանականն»), երկրաչափության, երաժշտության, քերականության և պոեզիայի («քերդողականն»), ճարտասանության բնագավառները, այլ կերպ ասած՝ ամբողջ միջնադարում ընդունված այսպես կոչված «Յոթ ազատ արվեստները» («Septem Artes Liberales»):

Իսկ «գործնական» գիտություններ համարվում են՝ «բարոյագիտությունը», «քաղաքագիտությունը» (քաղաքի ու քաղաքային կենցաղին վերաբերող հասարակական ըմբռնումների ամբողջությունը) և «տնտեսագիտությունը» (տան և ընտանիքի կեցության վերաբերող ըմբռնումների ամբողջությունը). «Եւ ըստ այսմ սարասի բարեցին յինքեանս զուսումնականն, զբնաբանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զերաժշտականն, զքերականն և զքերդողականն և զայսն ամենայն, որք են Ժ (10) թըւով, մաստունք իմաստասիրութեան՝ բաժանեալք ի տեսականէն և ի գործնականէն»³⁹:

Ուշագրավն այն է, որ Վարդան Արևելքին մատենագետի հմտությամբ թրվարկում է մեր առաջին մատենագիրների երկերը՝ արժեքավորելով դրանք գիտական բնութագրմամբ ու տեսակավորմամբ: Ստեղծագործական մտքի ներանց արգասիքները «տեսական» և «գործնական» իմաստասիրության երկու մեծ բաժանումներով ներկայացնելուց հետո, նա գրում է. «... խորոցն աստուծոյ արտայայտողն (իմա՝ մեր առաջին մատենագիրները— Լ. Խ.) ունելով ընդ ինքեանս բեռնա շահաւետս և աղբիւնարաւ, մաքաւախտ գեղեցիկս և ականս պատուական»՝ զբաղխոհականն, զատենականն, զկացրդականն (իմա՝ ճարտասանության երեք տեսակները— Լ. Խ.), զաստուածաբանականն...»⁴⁰: Արևելքին միաժամանակ ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ հայ առաջին մատենագիրները ոչ թե ապաշնորհ հետևորդներ («էպիգոններ») են եղել հունական դպրության, այլ սեփական հանճարի՝ հունական «վեհագոյն» դպրության հետ ունեցած արդյունավետ բեղմնավորմամբ «զհա-

38 Նույն տեղում, էջ 382—383:

39 Նույն տեղում, էջ 383:

40 Նույն տեղում:

յի» իմաստութիւնն են «զարդարել»: Իրենց հեղինակած երկերով, ասում է Արեւելցին, նրանք աշխարհի ժողովուրդներին ներկայացրին ճայ ժողովրդի համապարփակ գիտութիւնը, որը ազգային հպարտութիւն արդարացի զգացումով է տոգորում մեր ուսումնականներին: Նման հարցադրումը, անտարակույս, մեծապես բարձրացնում է այս պայծառ մտածողութեան տեր հեղինակին իբրև հայ մշակութիւն ներհուն իմաստավորողի և հայրենասեր գիտնականի: Շարունակելով զարգացնել իր միտքը, նա դրում է մեր մատենագրութեան հիմնադիրները «...գարդարելով զհայի իմաստութեամբ և վեճաբանիցն լուսաց պանծալիս ցուցանելով զգիտութիւնս մեր ազգաց բազմաց զնաստակ զգալութիւնս, զերեւակայութիւնս, զտրամախոսութիւն, զկարծիս և զմիտս և սոքոք զարեւստ և զմակացութիւն (իմա՝ գիտութիւնը—Լ. Խ.) և զայլսն ամենայն՝ զգովելիսն և զպանծալիսն պատուականաց, զմեկնեալսն և զղատեալսն յանպիտանեացն»⁴¹: Բացահայտելով հայ մատենագրութեան հիմնադիրների նպատակադրումը, Արեւելցին նշում է, որ նրանց հուզող մտահոգութիւնը եղել է ոչ թե նեղ՝ անձնակենտրոն փառասիրութիւնը, այլ «համազգային օգուտ» տալու առաջատար ու հիմնական մտասեւեռումը. «...Քանզի մեծաւ ճոգաբարձութեամբ փոյթ յանձին կալեալ երանելեացն զշահն և զօգտութիւն բազմաց տնօրինել»⁴²,— եզրակացնում է նա:

Ահա սրանք են, հիմնականում, Վարդան Արեւելցու հայացքներն ու ըմբռնումները լեզուների առաջացման, զրերի գլուտի, դպրութեան և մատենագրութեան նպատակադրումների ու նշանակութիւնների վերաբերյալ, հայացքներ, որոնք անտարակույս, մղեցին նրան անխուսափելիորեն ձեռնամուխ լինելու նաև մի այլ մատենագրական հուշարձանի՝ քերականութեան դասագիրք հեղինակելուն: Նրա «Մեկնութիւն քերականի» երկը միջնադարի հայ ուսումնագիտական կենտրոններում, իբրև դասընթաց, լայն կիրառութիւն է ունեցել՝ մտավորականների բազմաթիվ սերունդներին սովորեցնելով ճայերեւագիտութիւն:

ТЕОРИЯ ПРОИСХОЖДЕНИЯ ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ ПИСЬМЕННОСТИ И ЛИТЕРАТУРЫ ВАРДАНА АРЕВЕЛЦИ

Л. Г. ХАЧЕРЯН

Доктор филологических наук

Р е з ю м е

Вардан Аревелци оценивает многообразие языков как исключительно положительное явление. Он писал, что, коль скоро пестрота красок создает красоту, то многообразие языков — тоже своеобразное «чудо».

Ученый рассматривает язык не как нечто завершенное и неподвижное, а как развивающееся и совершенствующееся явление.

Согласно мнению Вардана Аревелци, письменность является действенной общественной силой. Она объединяет носителей того или иного языка общей культурой, духовностью,

⁴¹ Նույն տեղում, էջ 334:

⁴² Նույն տեղում: